ՀՈՂՆ ԱՆԺԱՄԿԵՏ (ԸՆԴՄԻՋՏ) ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ, № 1385, 7 ՀՈՒԼԻՍԻ 1935 Թ.

338.1
Հ-72

ՀՍՍՀ ԱՌԵՎՏՐԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽ-ՍՍՌ
ИМ. А. МЯСНИКЯН
Ц. ЕРЕВАН

1935 ԵՐԵՎԱՆ

12.06.2013

29.925

17 FEB 2010

38.1 ա6
77

ՀՈՂՆ ԱՆԺԱՄԱԿԵՏ (ԸՆԴՄԻՇՏ) ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

ՎՈՐՈՇՈՒՄ
ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
Մոսկվա, Կրեմլ, № 1385, 7 հուլիսի 1935 թ.

37227

Համաձայն հարվածային կոլտնտեսականների համամիութենական յերկրորդ համագումարի կողմից ընդունված և 1935 թ. փետրվարի 17-ին ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ու Համ. Կ(բ)Կ Կենտկոմի կողմից հաստատված՝ Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության 2-րդ հոդվածի (ԽՍՀՄ ՈԺ № 11, հոդ. 82), ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Ձեռնամուխ լինել հողն անժամկետ (ընդմիշտ) ոգտագործելու համար գյուղատնտեսական արտելներին պետական ակտեր տալու գործին։

ԽՍՀ Միության Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի վրա դնել հիշյալ ակտերը տալու վոլջ աշխատանքի ղեկավարությունը։

2. Սահմանել, վոր հողն անժամկետ (ընդմիշտ) ոգտագործելու պետական ակտը կազմվում է յերկու օրինակից. առաջին օրինակը տրվում է գյուղատնտեսական արտելի վարչությանը, իսկ յերկրորդը պահվում է շրջանային գործադիր կոմիտեյում։

3. Հաստատել վողջ ԽՍՀ Միության համար գյուղատնտեսական արտելի կողմից հողն անժամկետ (ընդմիշտ) ոգտագործելու պետական ակտի միասնական ձևը։

Սահմանել, որ պետական ակտի մեջ ճշտորեն մատնանշված պետք է լինեն ընդմիշտ ոգտագործելու համար համապատասխան գյուղատնտեսական արտելին ամրացված հողի չափերն ու արտաքին սահմանները։

4. Պարտավորեցնել ԽՍՀՄ Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին՝ հողն ընդմիշտ ոգտագործելու համար գյուղատնտեսական արտելներին պետական ակտեր տալու միջոցին—միջնաշերտությունը, հողի հեռվությունն ու հողոգտագործման մյուս թերությունները վերացնելու նպատակով, ինչպես և համապատասխան գյուղատնտեսական արտելների հողերի տարածությունը ու արտաքին ճիշտ սահմանները բնականում չափելու ու վորոշելու համար—հողաշինարարական անհրաժեշտ աշխատանքներ կատարել։

5. Սահմանել, վոր գյուղատնտեսական արտելների հողերի բնականում վորոշված արտաքին սահմանները ամրացվում են ԽՍՀ Միության Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի կողմից հաստատված ձևի սահմանանիշերով (սյուներով)։

6. Հաստատել ԽՍՀ Միության Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի ներկայացրած հրահանգը՝ հողն անժամկետ (ընդմիշտ) ոգտագործելու համար պետական ակտեր կազմելու և գյուղատնտեսական արտելներին տալու կարգի մասին (տես հավելվածը)։

7. Գյուղատնտեսական արտելների վրա դնել հողը հավիտյան ոգտագործելու համար պետական ակտ տալու կապակցությամբ տվյալ արտելում հողաշինարարական աշխատանք կատարողներին բնակելի և աշխատելու շենքեր, փոխադրական միջոցներ, անհրաժեշտ բանվորական ուժ (չափերը) և սահմանասյուների համար անտառանյութ տալու գործը։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների խորհրդի նախագահի տեղակալ՝ Վ. ՉՈՒԲԱՐ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների խորհրդի գործերի կառավարիչ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

ՄԱՐԶԱՅԻՆ (ՅԵՐԿՐԱՅԻՆ) ՀՈՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻՆ

Ուղարկելով 1935 թ. հուլիսի 7-ին ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատված «Հողն անժամկետ (ընդմիշտ) ոգտագործելու համար պետական ակտեր կազմելու և գյուղատնտեսական արտելներին տալու կարգի մասին» հրահանգը, ԽՍՀՄ Հողժողկոմատն առաջարկում է՝ լայնորեն ծանոթացնել նրա հետ թե հողաշինարարներին և թե շրջգործկոմները, գյուղխորհուրդներն ու կոլտնտեսությունները մարզում (յերկրում) պետական ակտեր կազմելու և տալու համար կատարվող նախապատրաստական աշխատանքները ճշտորեն համաձայնեցնել ԽՍՀՄ Ժողկոմխորհի՝ ս/թ. հուլիսի 7-ի՝ վորոշման և վերոհիշյալ հրահանգի պահանջների հետ։

Հրահանգն անպայման պետք է հանձնվի շրջհողբաժնի բոլոր ավագ հողաշինարարներին ու այն հողաշինարարներին, վոր աշխատում են հողը ընդմիշտ ոգտագործելու համար պետական ակտեր կազմելու գործով։

Սույնն ստանալուն պես անհապաղ վերանայել հողն ընդմիշտ ոգտագործելու համար պետական ակտեր կազմելու և կոլտնտեսություններին տալու աշխատանքները նախապատրաստելու առթիվ մարզի (յերկրի) հրատարակած հրահանգներն ու կանոնադրությունները և վերացնել բոլոր այն ցուցումները, վորոնք հակասում են կառավարության հաստատած ԽՍՀՄ Հողժողկոմատի հրահանգին։

Հինգ որվա ընթացքում, կառավարության հաստատած՝ ԽՍՀՄ Հողժողկոմատի հրահանգի հիման վրա, մշակել մանրամասն ցուցումներ պետական ակտեր կազմելու առթիվ հողաշինարարություն կատարելու հետ կապված՝ չափելու և նկարահանելու աշխատանքների տեխնիկայի վերաբերյալ ձեր մարզի (յերկրի) պայմանների համեմատ, միաժամանակ նկատի ունենալով կոլտնտեսությունների հողաշինարարության բարձր վորակի ապահովումը։ Հողաշինարարական յուրաքանչյուր նախագծի նկատմամբ պետք է ապահովել թե ջոկի ու հողաշինարարական խմբի պետի և թե շրջհողբաժնի ավագ հողաշինարարի կողմից նրա ուշի ուշով ընդունումը բնականում։

Մշակված տեխնիկական ցուցումները դուք անձամբ պետք է հաստատեք և ի գիտություն ներկայացնեք ԽՍՀՄ Հողժողկոմատի հողաշինարարական վարչության։

ԽՍՀՄ Հողագործության
ժողկոմի տեղակալ՝ ՄՈՒՐԱԼՈՎ

ԽՍՀՄ Հողժողկոմատի հողաշինարարական
վարչության պետ՝ ՇՈՒԼԵՑԿԻՆ

ՀՐԱՄԱՆԳ ՀՈՂՆ ԱՆԺԱՄԿԵՏ (ԸՆԴՄԻՇՏ) ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

ՀԱՎԵԼՎԱԾ ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1935 Թ.
ՀՈՒԼԻՍԻ 7-Ի № 1385 ՎՈՐՈՇՄԱՆ

1-ԻՆ ԲԱԺԻՆ

Հողն ընդմիշտ օգտագործելու համար պետական ակտեր տալու կարգը.

1. Հողն ընդմիշտ օգտագործելու պետական ակտը՝ ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հաստատած ձևով՝ շրջանային գործադիր կոմիտեն տալիս է այն կոլտնտեսություններին, որոնց կանոնադրությունը գրանցված է շրջգործկոմում։

2. Պետական ակտը կազմում է շրջանային հողբաժինը, համաձայն շրջանային գործադիր կոմիտեյի ընդունած ու հաստատած՝ գյուղատնտեսական արտելի հողի ճիշտ չափերի ու արտաքին սահմանների։

3. Պետական ակտը կազմվում է յերկու որինակից, ստորագրվում է շրջանային գործադիր կոմիտեյի նախագահի, շրջանային հողբաժնի վարիչի ու շրջանային հողբաժնի ավագ հողաշինարարի կողմից և հաստատվում է շրջանային գործադիր կոմիտեյի դմասյա կնիքով։ Ակտի առաջին որինակը տրվում է գյուղատնտեսական արտելի վարչությանը, իսկ յերկրորդը պահվում է շրջանային գործադիր կոմիտեյում։

4. Գյուղատնտեսական արտելի վարչությանը տրվող պետական ակտը համամիութենական № ունի։ Ակտերի համարակալումը յուրաքանչյուր յերկրի, մարզի և հանրապետության համար սահմանում է ԽՍՀ Միության Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը։

5. Գյուղատնտեսական արտելի վարչության նախագահն ակտն ստանալու համար ստորագրում է պետական ակտերի գրանցման մատյանում (հոդ. 6) և պետական ակտի յերկրորդ որինակի վրա, որը մնում է շրջանային գործադիր կոմիտեյում։

6. Յուրաքանչյուր շրջանային գործադիր կոմիտե պետական ակտերի գրանցման հետևյալ ձևի մատյան է պահում.

ա) վերնագրի եջ՝ . . . . . «հանրապետության, մարզի (յերկրի) . . . . . շրջանի կոլտնտեսությունների կողմից հողն ընդմիշտ օգտագործելու պետական ակտերի գրանցման մատյան».

բ) հերթական համարը.

գ) գյուղատնտեսական արտելի անունը.

դ) գյուղատնտեսական արտելի վայրը (գյուղ՝ ավան, ստանիցա և այլն).

ե) գյուղատնտեսական արտելին տված պետական ակտի համարը.

զ) գյուղատնտեսական արտելին ընդմիշտ օգտագործելու համար ամրացվող հողի տարածությունը.

է) գյուղատնտեսական արտելին պետական ակտ տալու ժամանակը.

ը) գյուղատնտեսական արտելի նախագահի ստորագրությունը՝ պետական ակտն ստանալու համար։

Մատյանը ժապավինվում ու վավերացվում է շրջանային գործադիր կոմիտեյի նախագահի, շրջանային հողբաժնի վարիչի և շրջանային հողբաժնի ավագ հողաշինարարի ստորագրությամբ և հաստատվում է շրջանային գործադիր կոմիտեյի գմբեթյա կնիքով։

7. Պետական ակտերի գրանցման մատյանն ու պետական ակտերի յերկրորդ որինակը պահվում են շրջանային գործադիր կոմիտեյում՝ անկիզելի պահարանի կամ առանձնապես պատրաստված սանդուղների մեջ, վոր մատչելի յեն միայն հետևյալ անձնավորություններին—շրջանային գործադիր կոմիտեյի նախագահին, շրջանային հողբաժնի վարիչին և շրջանային հողբաժնի ավագ հողաշինարարին։

2-ՐԴ ԲԱԺԻՆ

Հողն ընդմիշտ ոգտագործելու համար պետական ակտեր կազմելու կարգը։

8. Նախքան հողն ընդմիշտ ոգտագործելու համար պետական ակտ կազմելը, գյուղատնտեսական արտելի կողմից ոգտագործվող հողի ճիշտ չափերն ու արտաքին սահմանները բնականում վորոշելու նպատակով, հողաշինարարական աշխատանքներ են կատարվում, վորի ժամանակ վերացվում են հողերի միջնաշերտությունը, հեռվությունն ու հողոգտագործման մյուս թերությունները։

Այս աշխատանքները կատարվում են միաժամանակ մեկ մեքենատրակտորային կայանի կողմից ոգտագործվող բոլոր կոլտնտեսություններում, կամ մի վարչական շրջանի մեջ մտնող բոլոր կոլտնտեսություններում։

9. Այն կոլտնտեսություններում, վորտեղ հողաշինարարություն է կատարվել, հողի չափերն ու արտաքին սահմանները նկարահանման կամ չափումների հիման վրա արդեն վորոշված են, չափելու նոր աշխատանքներ չեն կատարվում, և կոլտնտեսության ոգտագործման տակ յեղած հողի չափերին ու սահմաններին վերաբերող տվյալները պետական ակտերի մեջ են գրանցվում 15—21 հոդվածներով սահմանված կարգով։

10. Այն կոլտնտեսություններում, վորոնք չունեն միջնաշերտություն, հողերի հեռվություն ու հողոգտագործման այլ թերություններ և հողափոխություն ու սահմանների շտկում չեն պահանջում, բայց հողաշինարարություն չեն ունեցել (անկախ յեղած նկարահանման), կոլտնտեսության ոգտագործման տակ յեղած հողի ճիշտ չափերն ու արտաքին սահմանները վորոշվում են կոլտնտեսության արտաքին սահմանները գործիքով (թեոդոլիտով) շրջելու, գծերի անկյուններն ու յերկարությունը չափելու միջոցով։

11. Այն կոլտնտեսություններում, վորոնք միջնաշերտություն, հողերի հեռվություն ու հողոգտագործման այլ թերություններ ունեն, վորոնց վերացնելու համար անհրաժեշտ են սահմանների տեղաշարժ ու հողափոխություն, բայց առանց հողոգտագործման չափերը փոփոխելու, կոլտնտեսության հողի ճիշտ չափերն ու արտաքին սահմանները վորոշվում են 10-րդ հոդվածում նշված յեղանակով, բայց հին նկարահանումն ոգտագործելով, իսկ վորտեղ հին նկարահանումներ չկան՝

հորիզոնական (թեոդոլիտային կամ մենզուլային) նոր նկարահանումներ կատարելով, այնպես վոր նպաստեն հիշյալ թերությունների վերացմանը։

12. Չափումների տեխնիկայի բնագավառում ավելորդ բարդություններից խուսափելու համար անկյունները չափվում են միարոպե թեոդոլիտով՝ շրջանակի յերկու դրությամբ։

Անկյունային անկապը (невязка) չպետք է անցնի մեկ ու հինգ տասներորդական բոպեյից՝ բաղադրատված հողոգտագործման անկյունների թվի քառակուսի արմատով։

Գծային անկապը ընթացքի յերկարության (սահմանագծի) մեկ ու կես հազարերորդականից չպետք է անցնի։

13. Մենատնտեսների զբաղեցրած հողերը հատկացվում են կոլտնտեսության հողերի մասսիվից դուրս՝ ցանքաշրջանառության դաշտերի ծայրերում, և դասավորում են այնպես, վոր մենատնտեսների հողերը հետագայում կոլտնտեսության մասսիվին միացվելու դեպքում կոլտնտեսության ցանքաշրջանառությունը չխանգարվի։

14. Յերբ արոտավայրերն ու խոտհարքները մի քանի կոլտնտեսության կամ կոլտնտեսությունների ու խորհնտեսությունների և այլ կազմակերպությունների ընդհանուր ոգտագործման տակ են, այդ արոտավայրերն ու խոտհարքները նույնպես ընդմիշտ ամրացվում են կոլտնտեսություններին՝ տարածությունն ու սահմանները վորոշելով յեղած հոտի և անասնապահության զարգացման պետական պլանի համաձայն, բայց կոլտնտեսության կողմից փաստորեն ոգտագործածից վոչ պակաս։

15. Կոլտնտեսության հողի արտաքին սահմանները բնականում վորոշում է հողաշինարարը՝ արտելի նախագահի ու չափարարների հետ միասին և, անպայմանն, սահմանակից կոլտնտեսությունների, խորհնտեսությունների ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Արտաքին սահմանները վորոշելիս հողաշինարարը արձանագրություն է կազմում, վորի մեջ մանրամասն կերպով նկարագրվում է տեղի սահմանների դասավորությունը և արված առարկությունների եությունը։

Մանրություն։ Շահագրգռված կազմակերպություններն առաջիկա հողաշինարարական գործողությունների մասին իրազեկ են դարձվում կոչնագրերով, վոր պետք է հանձնվեն վոչ պակաս քան յերկու որ առաջ։ Հարևան հողոգտագործությունների ներկայացուցիչների չգալու դեպքում (յերբ կոչնագիրը ժամանակին է հանձնված) այս առթիվ արձանագրություն է կազմվում, և սահմանները վորոշվում են առանց նրանց։

16. Հողաշինարարի կազմած՝ կոլտնտեսության արտաքին սահմանների նախագիծն առաջարկվում է կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովին՝ գյուղխորհրդի նախագահի ներկայությամբ։ Նախագիծը քննության է առնվում ընդհանուր ժողովում, վորտեղ անպատճառ կազմվում է արձանագրություն։ Արձանագրությունն ստորագրում են ընդհանուր ժողովի նախագահը, հողաշինարարն ու կոլտնտեսության նախագահը և վա-

վերացնում է գյուղխորհրդի նախագահը։ Այնուհետև նախագիծն ու արձանագրությունը և մյուս բոլոր նյութերը վերջնական հաստատության են ներկայացվում շրջանային գործադիր կոմիտե։

Կոլտնտեսությունների հողերի արտաքին սահմանները վորոշելիս ծագող վեճերը լուծում են շրջանային հողհանձնաժողովները։ Հողհանձնաժողովների վորոշումները վերջնական հաստատման են ներկայացվում խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեին։

17. Շրջանային գործադիր կոմիտեի հաստատած՝ կոլտնտեսության հողաշինարարության նախագիծը փոխանցվում է ընականի՝ արտաքին սահմանները ամրացնելով սահմանանիշերով (այուներով)։ Սահմանանիշը դրվում են սահմանների բոլոր վոլորաններում։ Սահմանի վոլորակետերից պետք է յերևան նախորդ և հաջորդ սահմանասյունները։ Յեթե սահմանի ուղիղ գիծը 500 մետրից ավելի յե, սյունները դրվում են յուրաքանչյուր 500 մետրից հետո։

Արտաքին սահմանները, վոր գետերի, լճերի ու ճահիճների միջով են ընկնում, սահմանանիշերով ամրացվում են միայն ցամաքի սահմանների հետ խաչաձևվող տեղերում։

18. Բաց ու չոր տեղերում կոլտնտեսությունների հողերի արտաքին սահմանները մի ակոս հերկով են նշվում։

19. Սահմանասյունի յերկարությունը սահմանվում է մեկ ու կես մետր, իսկ տրամագիծը՝ 20 սանտիմետր։ Սյունի վերևի ծայրը տաշում և վրան «ԽՍՀՄ» տառեր և մուրճ ու մանգաղի պատկերումն են խարանում։ Սյունի տակն ապյուս կամ քար են դնում, վոր

սյունը կորցնելիս կարելի լինի տեղը գտնել։ Սյունի ցածի ծայրը փորոքում (քյառքում) են, վորի մեջ լայնքին մի չորսու դնում, վոր դժվարացվի սյունի հանելը։ Սյունի ցածի մասը, վոր հողի մեջ է մտնում, այրում ու ձթում են։ Սահմանի վոլորանները ցույց տվող սյուների վրա, բացի այդ, կոլտնտեսության անունը կրող մետաղե տախտակ են մեխում։

Կոլտնտեսությունների վրա յե դրվում դրված սահմանասյունների պահպանությունը։

20. Պետական ակտի յերրորդ եջում՝ «Գյուղատնտեսական արտելին ընդմիշտ ոգտագործման տրված հողերի հատակագիծը» վերնագրի տակ մեջ են առնվում կոլտնտեսության կողմից ոգտագործվող հողերի արտաքին սահմանները։

Հատակագծի մեջ հողոգտագործության սահմանների վրա ցույց են տրվում գծերի կողմնատները (հաժարիչ) և գծերի չափերը (հայտարար)։

21. Հատակագծի մեջ ցույց են տրվում յերկաթուղային արանսպորտի հողերը, գետերը, լճերը, պետական ու շրջանային նշանակություն ունեցող ճանապարհները, վորոնք գտնվում են կոլտնտեսության հողերի մասսիվում։

22. Յեթե պետական ակտը տալուց հետո կոլտնտեսության հողերին միանան կոլտնտեսություն մտած մենատնտեսների հողերը, կամ պետական ֆոնդի ազատ հողերը, այդ փոփոխությունները նշվում են պետական ակտի «Կոլտնտեսությունների կողմից հողը ընդմիշտ ոգտագործելու պետական ակտի լրացումներ» բաժնում։

Վերոհիշյալ միացումները սև տուշի հոծ գծերով

մեջ են բերվում պետական ակտի նաև յերբորդ եջում, իսկ հին սահմանները ջնջվում են կարմիր տուշի կարճ գծերով։

Նույնպիսի նշումներ միաժամանակ արվում են նաև պետական ակտի այն որինակում, որ շրջանային գործադիր կոմիտեյում է պահվում։

Վերոհիշյալ բոլոր փոփոխությունները գրանցվում են պետական ակտում շրջանային հողբաժնի ավագ հողաշինարարի կողմից ու վավերացվում են շրջանային գործադիր կոմիտեյի նախագահի, շրջանային հողբաժնի վարիչի և շրջանային հողբաժնի ավագ հողաշինարարի ստորագրությամբ։

23. Հողն ընդմիշտ ոգտագործելու պետական ակտը ճիշտ կազմելու, կոլտնտեսությունների ոգտագործման տակ յեղած հողի արտաքին սահմաններն ու չափերը ճիշտ և ստույգ կերպով վորոշելու համար պատասխանատու յեն շրջանային հողբաժնի ավագ հողաշինարարն ու հողաշինարարական խմբի պետը։

24. Այս հրահանգը լույս տեսնելուց հետո վերացվում են կոլտնտեսությունների հողոգտագործության սահմանները գծելու և ձևակերպելու առթիվ դաշնակից ու ինքնավար հանրապետությունների Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի, յերկրային ու մարզային հողվարչությունների հրատարակած բոլոր նախորդ հրահանգները։

ԽՍՀՄ Հողագործության Ժողովրդական
Կոմիսար՝ Մ. ՉԵՐՆՈՎ,

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

_____ շրջանի
_____ գյուղխորհրդի գյուղատնտեսական արտելի անժամկետ (ընդմիշտ) ոգտագործելու համար ամրացվող հողերի չափերն ու ճիշտ սահմանները վորոշող հողաշինարարական նախագիծը բնականի փոխանցելու համար։

Համաձայն խորհուրդների _____
_____ շրջգործկոմի _____ 193 թվի
№ _____ վորոշման՝ _____ գյուղատնտեսական արտելին ընդմիշտ ոգտագործելու համար ամրացվող հողերի չափերն ու ճիշտ սահմանները վորոշող հողաշինարարական նախագիծը հաստատելու մասին, յես՝ _____ ՍՍՀՀ Հողժողկոմատի, յերկր. (մարզ.) հ. վ. հողաշինարար
_____ " _____
գյուղատնտեսական արտելի նախագահ _____
_____ ի և սահմանակից հողոգտագործողների (ցույց տալ հողոգտագործողների անունը, և ներկայացուցիչների ազգանունը, անունն ու հայրանունը) _____
_____
_____
_____

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հանր. Publ. Library
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա. Մեսրոպի անվան
Ս. Մեսրոպիանի անվան
1008/37297
37297

_____

_____

_____

_____

_____

ներկայությամբ, համաձայն հաստատված նախագծի, բնության մեջ փոխադրեցի _____

_____ գյուղատնտեսական արտելի հողերի սահմանները, ամրացրի սահմանված ձևի մշտական սահմանասյուներով ու փակոս հերկեցի (ցույց տալ թե վոր մասերում) _____

_____

_____

_____

_____

Սահմանների նկարագրությունը (ցույց տալ յուրաքանչյուր սահմանի յերկարությունն ու բնույթը, ցանքից, գետից, ձորից, անտառից այլն) և այդ սահմանին դրված սահմանասյուների թիվը _____

_____

_____

Հողաչինարար՝ _____

_____ գյուղատնտեսական արտելի նախագահ՝

Սահմանակից հողագործողների ներկայացուցիչներ՝

_____

_____

_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

_____ շրջանի _____

_____ գյուղխորհրդի գյուղատնտեսական արտելի ոգտագործման տակ գտնվող հողի չափն ու ճիշտ սահմանները վորոշելու համար։

Հողի մշտապես ոգտագործման մասին՝ պետական ակտ կազմելու և արտելին հանձնելու համար

յես՝ _____ ՍԽՀ. ՀԺԿ. յերկր.

(մարզ.) հողաշինարար _____

_____ գյուղատնտեսական արտելի նախագահ (ազգանունը, անունն ու հայրանունը) _____

_____ և սահմանակից հողոգտագործողների ներկայացուցիչներ (ցույց տալ հողոգտագործողների անունը և վերջիններիս ներկայացուցիչների ազգանունը, անունն ու հայրանունը)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____ հետ միասին, սահմանեցի բնականում _____

_____ շրջանի _____

գյուղխորհրդի գյուղատնտեսական արտելի ոգտագործման տակ գտնվող հողի չափն ու ճիշտ սահմանները։

Սահմանների նկարագրությունը (ցույց տալ սահմանակից հողոգտագործությունները, սահմանի յերկարությունն ու ընույթը—ցամաքից, գետից, ձորից, անտառից և այլն՝ ըստ յուրաքանչյուր սահմանի) և այդ սահմանին դրված սահմանասյուների թիվը։

_____

_____

_____

_____

_____

_____

Հայտարարություններ (համաձայնություն կամ առարկություն) նշված սահմանների մասին _____

_____

«_____» թիվ _____ամսի 193 թ. հողաշինարար՝

Գյուղատնտեսական արտելի նախագահ՝

Սահմանակից հողագործողների ներկայացուցիչներ՝

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. ՀԱՅԱՍՏԱՆ
Ա. Մ. Մ. Մ

29.925

ЭГЬ.

НАРКОМЗЕМ СССР

О выдаче сельскохозяйственным артелям государственных актов на бессрочное (вечное) пользование землей.

Постановление Совета народных комиссаров СССР

Сельхозгиз—Эривань—1935 г.